Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1248-26.01.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ նույն մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 25-րդ եւ 26-րդ կետերով.

«25) շահերի բախում՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված իրավիճակի առաջացում.

26) փոխկապակցված մասնակից՝ մասնակից,որը հանդիսանում է՝

ա. սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ Կառավարության կողմից նույն մասով նախատեսված մակարդակներում ներառված՝ պետության կողմից ստեղծված հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի (այսուհետ սույն հոդվածում՝ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար կամ նրա ժամանակավոր պաշտոնակատար) ամուսինը, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, ինչպես նաեւ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված համատեղ բնակվող անձը.

բ. այն կազմակերպությունը, որում մասնակցության եւ (կամ) պայմանագրի հիման վրա սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը կամ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարը կամ սույն կետի «ա» ենթակետով նշված անձը կամ վերջիններս միասին՝ հանրագումարային եղանակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) դրա կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու

պայմանները) եւ (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.1-ին եւ 12.2-րդ կետերով.

«12.1) գնման գործընթացների վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների ազդեցության մակարդակի բարձրացման դեպքերը՝ վերջիններիս գնումների գործընթացների վրա փաստացի կամ հնարավոր ազդեցությունից ելնելով.

12.2) գնման գործընթացների վրա սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» պարբերությամբ նախատեսված՝ պետության կողմից ստեղծված հիմնադրամների գործադիր մարմնի ղեկավարներին կամ գործադիր մարմնի ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարներին սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված երկրորդ եւ երրորդ մակարդակներում ներառելու եւ (կամ) մակարդակները բարձրացնելու դեպքերը.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում, եթե պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է սույն օրենքի 36-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով:»

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Արգելվում է՝

1) ազդեցության առաջին մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել գնման գործընթացներին: Ազդեցության առաջին մակարդակում պարտադիր ներառվում են Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետերը, լիազորված մարմնի ղեկավարը եւ լիազորված մարմնի գործառույթները համակարգող նախարարի տեղակալը.

2) ազդեցության երկրորդ մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել տվյալ պատվիրատուի եւ վերջինիս կառավարմանը հանձնված առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Ազդեցության երկրորդ մակարդակում պարտադիր ներառվում են վարչական եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ Ազգային ժողովի պատգամավորների եւ համայնքի ղեկավար չհանդիսացող ավագանու անդամների), գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, քննչական մարմինների ղեկավարներն ու նրանց տեղակալները, գլխավոր քարտուղարները.

3) ազդեցության երրորդ մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել տվյալ պատվիրատուի կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Ազդեցության երրորդ մակարդակում պարտադիր ներառվում են անկախ պետական մարմինների եւ ինքնավար մարմինների անդամները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը եւ նրա տեղակալները, Մարդու իրավունքների պաշտպանը.

4) սույն օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց եւ (կամ) միեւնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ղեկավարվող կամ ավելի քան հիսուն տոկոս միեւնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միեւնույն գործընթացին, բացառությամբ՝

ա. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

բ. սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:»:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ՝

1) կետի «բ» ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,
2) կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետով.

«գ. իր հաստատած հայտարությունը՝ գնման տվյալ գործընթացի շրջանակում սույն օրենքով նախատեսված փոխկապակցված մասնակցի (մասնակիցների) բացակայության մասին:»:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1 Պայմանագրով (նախագծով) սահմանվում է, որ այն դեպքում, երբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչեւ պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը խախտել է սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ից 3-րդ կետերով նախատեսված մասնակցության արգելքը, ապա եզրակացության հիման վրա պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը: Ընդ որում՝

1) եթե պայմանագիրը միակողմանիորեն լուծելու որոշումը կայացնելու օրվա դրությամբ առկա են պատշաճ կատարված, սակայն պատվիրատուի կողմից դեռեւս չընդունված պայմանագրի արդյունքներ, ապա պատվիրատուն ապահովում է դրանց ընդունումը եւ վճարումների կատարումը.

2) պատվիրատուն պայմանագրի միակողմանի լուծման հետեւանքով չի կրում պայմանագրի կողմի համար առաջացող իրական վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ

պայմանագրի կողմը պատվիրատուին վերադարձնում է գործարքով իրեն վճարված գումարի 20 տոկոսը: Սույն պարբերությամբ նախատեսված գումարը հաշվանցվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձեւով ներկայացված պայմանագրի եւ/կամ որակավորման ապահովման գումարներից: Եթե գումարը՝

ա. պակաս է ապահովման (ապահովումների) չափից, ապա ապահովման գումարի մնացորդը վերադարձվում է պայմանագրի կողմին.

բ. ավել է ապահովման չափից, պայմանագրի կողմը ապահովում է պակասողի գումարի վճարումը պատվիրատուին:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած եւ չավարտված գնման գործընթացների վրա:

Կ-1248-26.01.2026-ՏՀ-011/1~~0~~

Լրամշակված ~~նախագիծ~~
~~Առաջին~~Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ նույն մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 25-րդ եւ 26-րդ կետերով.

«25) շահերի բախում՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված իրավիճակի առաջացում.

26) փոխկապակցված մասնակից՝ մասնակից,որը հանդիսանում է՝

ա. սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ Կառավարության կողմից նույն մասով նախատեսված մակարդակներում ներառված՝ պետության կողմից ստեղծված հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի (այսուհետ սույն հոդվածում՝ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար կամ նրա ժամանակավոր պաշտոնակատար) ամուսինը, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, ինչպես նաեւ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված համատեղ բնակվող անձը.

բ. այն կազմակերպությունը, որում մասնակցության եւ (կամ) պայմանագրի հիման վրա սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը կամ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարը կամ սույն կետի «ա» ենթակետով նշված անձը կամ վերջիններս միասին՝ հանրագումարային եղանակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու

(այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) դրա կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) եւ (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.1-ին եւ 12.2-րդ կետերով.

«12.1) գնման գործընթացների վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների ազդեցության մակարդակի բարձրացման դեպքերը՝ վերջիններիս գնումների գործընթացների վրա փաստացի կամ հնարավոր ազդեցությունից ելնելով.

12.2) գնման գործընթացների վրա սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» պարբերությամբ նախատեսված՝ պետության կողմից ստեղծված հիմնադրամների գործադիր մարմնի ղեկավարներին կամ գործադիր մարմնի ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարներին սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված երկրորդ եւ երրորդ մակարդակներում ներառելու եւ (կամ) մակարդակները բարձրացնելու դեպքերը.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում, եթե պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է սույն օրենքի 36-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով:»

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Արգելվում է՝

1) ազդեցության առաջին մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել գնման գործընթացներին: Ազդեցության առաջին մակարդակում պարտադիր ներառվում են Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետերը, լիազորված մարմնի ղեկավարը եւ լիազորված մարմնի գործառույթները համակարգող նախարարի տեղակալը.

2) ազդեցության երկրորդ մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել տվյալ պատվիրատուի եւ վերջինիս կառավարմանը հանձնված առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Ազդեցության երկրորդ մակարդակում պարտադիր ներառվում են վարչական եւ քաղաքական պաշտոն

զբաղեցնող անձինք (բացառությամբ Ազգային ժողովի պատգամավորների եւ համայնքի ղեկավար չհանդիսացող ավագանու անդամների), գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, քննչական մարմինների ղեկավարներն ու նրանց տեղակալները, գլխավոր քարտուղարները.

3) ազդեցության երրորդ մակարդակում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված մասնակիցներին մասնակցել տվյալ պատվիրատուի կողմից կազմակերպվող գնման գործընթացներին: Ազդեցության երրորդ մակարդակում պարտադիր ներառվում են անկախ պետական մարմինների եւ ինքնավար մարմինների անդամները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը եւ նրա տեղակալները, Մարդու իրավունքների պաշտպանը.

4) սույն օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց եւ (կամ) միեւնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ղեկավարվող կամ ավելի քան հիսուն տոկոս միեւնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միեւնույն գործընթացին, բացառությամբ՝

ա. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

բ. սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:»:

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ~~կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «գ» ենթակետով.~~՝

1) կետի «բ» ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,
2) կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետով.

«գ. իր հաստատած հայտարությունը՝ գնման տվյալ գործընթացի շրջանակում սույն օրենքով նախատեսված փոխկապակցված մասնակցի (մասնակիցների) բացակայության մասին~~:»~~:»:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1 Պայմանագրով (նախագծով) սահմանվում է, որ այն դեպքում, երբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչեւ պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը խախտել է սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ից 3-րդ կետերով նախատեսված մասնակցության արգելքը, ապա եզրակացության հիման վրա պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը: Ընդ որում՝

1) եթե պայմանագիրը միակողմանիորեն լուծելու որոշումը կայացնելու օրվա դրությամբ առկա են պատշաճ կատարված, սակայն պատվիրատուի կողմից դեռեւս չընդունված պայմանագրի արդյունքներ, ապա պատվիրատուն ապահովում է դրանց ընդունումը եւ վճարումների կատարումը.

2) պատվիրատուն պայմանագրի միակողմանի լուծման հետեւանքով չի կրում պայմանագրի կողմի համար առաջացող իրական վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ պայմանագրի կողմը պատվիրատուին վերադարձնում է գործարքով իրեն վճարված գումարի 20 տոկոսը: Սույն պարբերությամբ նախատեսված գումարը հաշվանցվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձեւով ներկայացված պայմանագրի եւ/կամ որակավորման ապահովման գումարներից: Եթե գումարը՝

ա. պակաս է ապահովման (ապահովումների) չափից, ապա ապահովման գումարի մնացորդը վերադարձվում է պայմանագրի կողմին.

բ. ավել է ապահովման չափից, պայմանագրի կողմը ապահովում է պակասողի գումարի վճարումը պատվիրատուին:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած եւ չավարտված գնման գործընթացների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1248-26.01.2026-ՏՀ-011/1) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «12.1» և «12.2» թվերն անհրաժեշտ է փոխարինել «12.1-ին» և «12.2-րդ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 3-րդ հոդվածով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում լրացվող նախադասության մեջ կիրառված «1.1» թիվն անհրաժեշտ է փոխարինել «1.1-ին» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.		Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում կատարել լրացում, ինչի արդյունքում անհրաժեշտություն կառաջանա «բ»	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ.	Ընդունվել է:

			ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:	«Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ՝ 1) կետի «բ» ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, 2) կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետով՝ «գ. իր հաստատած հայտարությունը՝ գնման տվյալ գործընթացի շրջանակում սույն օրենքով նախատեսված փոխկապակցված մասնակցի (մասնակիցների) բացակայության մասին:»:	
«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
4.		Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվում է Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում «դեպքերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Գնումների մասին» օրենքով սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» պարբերությամբ նախատեսված ու Կառավարության կողմից «Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մակարդակներում ներառված՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			պետության կողմից ստեղծված հիմնադրամների գործադիր մարմինների ղեկավարների կամ գործադիր մարմինների ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների հետ փոխկապակցված մասնակիցների կողմից *գնման գործընթացներին մասնակցության արգելքի առերևույթ խախտումների*» բառերը: Միաժամանակ 3-րդ կետով նախատեսվում է 5-րդ մասում «շահերի բախման դեպքի» բառերից հետո լրացնել «կ*ամ «Գնումների մասին» օրենքով սահմանված արգելքի*» բառերը: Նշվածի կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասում ևս կատարել համապատասխան փոփոխություն՝ նախատեսելով հղում նաև «Գնումների մասին» օրենքով սահմանված մասնակցության արգելքների խախտման դեպքերին:		
5		Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, որտեղ «իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, բնակության (գտնվելու) վայրի հասցեն» ձևակերպումը առաջարկում ենք փոխարինել «իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը, հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը)», հիմք ընդունելով նույն հոդվածի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			1-ին մասի 1-ին կետում կիրառված ձևակերպումը:		
6		Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածում «նկատմամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «վրա» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7	*«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր* *Նարեկ Ղահրամանյան*	Նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին հոդվածով՝ «Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով, «1.1) մրցույթն ավարտվելուց հետո՝ Խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում հաղթող թեկնածու ընտրելու վերաբերյալ որոշում չի կայացնում.»:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8	*«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր* *Նարեկ Ղահրամանյան*	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «օրենքն» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի,» բառերը, 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ և 3-րդ մասերով՝ «2. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքը հրապարակելուց հետո՝ անմիջապես: 3. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ մտնելու պահին Օրենքի 10.4-րդ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով նախատեսված հիմքով Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի առկայության դեպքում Խորհուրդը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարկում է սույն օրենքի 1-ին հոդվածի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում: Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր կարգով:»:		
«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
9		Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է լրացնել օրենքի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ *Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:* Բացի այդ, Նախագծի 1-ին հոդվածում Անհրաժեշտ ուշադրություն դարձնել չակերտների կիրառմանը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

10		Նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին հոդվածում «222.2», 2-րդ հոդվածում «222.3», 3-րդ հոդվածում «222.4» թվերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «222.2-րդ», «222.3-րդ», «222.4-րդ» բառերով: Նշված հոդվածներում «բառերը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բառերով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11		Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «նկատմամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «վրա» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: